## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

| ԹԵՐԹ | ԱՆՎԱՆՈՒՄ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|
| 1 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ | 1 |
| 2 | ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:2000 | 2 |
| 3 | ԿԱՌՈՒՑՎՈՂ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԿԴՀ 1- 5 | 3 |
| 4 | ԿԱՌՈՒՑՎՈՂ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԿԴՀ 5 - ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆ | 4 |
| 5 | ԿՈՅՈՒՂՈՒ ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ՊՐՈՖԻԼ ԿԴՀ 1 - 5 | 5 |
| 6 | ԿՈՅՈՒՂՈՒ ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ՊՐՈՖԻԼ ԿԴՀ 5 - 9 | 6 |
| 7 | ԿՈՅՈՒՂՈՒ ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ՊՐՈՖԻԼ ԿԴՀ 9 - 11 | 7 |
| 8 | ԿՈՅՈՒՂՈՒ ԴԻՏԱՀՈՐ ԿԴՀ 1-8, 10, 11 | 8 |
| 9 | ԿՈՅՈՒՂՈՒ ԴԻՏԱՀՈՐ ԿԴՀ 9 | 9 |
| 10 | ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՎԱՔՈՎԻ ԴԻՏԱՀՈՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԽԵՄԱ | 10 |
| 11 | ՏԵՂԱԴՐՎՈՂ ԿՈՅՈՒՂԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ TOPAC 150 ԿԱՅԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԽԵՄԱ | 11 |
| 12 | ԿՈՅՈՒՂԱԳԾԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ | 12 |

## ՎԿԱՅԱԿՈՉՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

1) ՆՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»,
2) ՀՀՇՆ 33-01-2014 «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ. Հիմնական դրույթներ»,
3) ՀՀՇՆ 40-01.02 «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»,
4) ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում»,
5) ՀՀՇՆ 20-05-2022 «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանությունը կոռոզիայից»,
6) ՀՀՇՆ 31-03.03-2022 «Վարչական և կենցաղային շենքեր»,,
7) ՄՆիՊ 3.05.01-85 «Ներքին սանիտարատեխնիկական համակարգեր»
8) ՀՀՇՆ 40-01.02-«Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»,
9) ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»,
10) ՄՍՊ 4.01-101-2000 «Ջրամատակարարման և կոյուղու համակարգերի պոլիմերային նյութերից խողովակաշարերի նախագծում և մոնտաժում»

*Նախագիծը մշակված է գործող շինարարական նորմերի ու կանոնների պահանջներին համապատասխան և նախատեսվում են հրդեհաանվտանգության և պայթունաանվտանգության միջոցառումներ*

*ՆԳԶ* *Ն. Սարդարյան*

## Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Կարմիր Աղեկ բնակավայրի ջրահեռացման ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և երաշխավորագրի տրամադրման աշխատանքներն իրականացվել են համաձայն Ալավերդի համայնքապետարանի ճարտարապետա - հատակագծային առաջադրանքի և գործող ՇՆՈՒԿ 2.04.01 - 85 , ՇՆՈՒԿ 478 - 80 հիման վրա, հաշվի են առնվել Կարմիր Աղեկ բնակավայրում կառուցվող ջրահեռացման համակարգի տեղանքն ու բնակիչների պահանջները: Սույն նախագծով նախատեսված է կառուցել կենցաղային կոյուղու հեռացման ստորգետնյա ցանց: Կառուցվող կոյուղու համակարգը իրականացվում է կոյուղու պոլիէթիլենային ծալքավոր Φ200 SN8 խողովակներով` ստորգետնյա եղանակով: Կառուցվող կոյուղատարի վրա բոլոր թեքման անկյուններում, ինչպես նաև թույլատրելի երկարությունների սահմանաչափերում և բնակիչների ամենամոտ միացման կետերում նախատեսված է կառուցել ե/բ հավաքովի Φ1000 տրամագծով դիտահորեր` թուջե մտոցներով: Կառուցվող դիտահորերի կոյուղու հոսքի հատվածներում անհրաժեշտ է կառուցել ուղղորդող առվակներ, կոյուղու ճիշտ հոսքն ապահովելու համար: Նախագծով` կոյուղու վերջնակետում նախատեսված է կենցաղային կոյուղու մաքրման TOPAS 150 կայանի տեղադրում: Կոյուղու կառուցման նպատակն է բնակելի տների կենցաղային կոյուղու հեռացումը: Անթույլատրելի է կոյուղու համակարգ ոչ կենցաղային նյութերի և աղբի ներթափանցումը: Կառուցվող կոյուղագիծը հիմնականում իրականացվում է տեղանքի բնական թեքությունների համապատասխան, այն հատվածներում, որտեղ չի բավարարում բնական թեքությունը անհրաժեշտ է կոյուղագծի թեքությունը ապահովել ընտրված խողովակի տրամագծին համապատասխան թեքության գործակցով, իսկ որտեղ բնական թեքությունը գերազանցում է թույլատրելի թեքությունը անհրաժեշտ է փոքրացնել թեքությունը` դիտահորերում փոխելով խողովակների մուտքի և ելքի նիշերը` ըստ նախագծում տրված թեությունների: Տեղադրվող մաքրման կայանն իրենից ներկայացնում է մոդուլ հավաքական կայան, որը տեղադրվում է պահպանելով արտադրողի հրահանգները: անհրաժեշտ է կայանի պավիրումից և տեղադրումից առաջ ուսումնասիրել կայանի տեղնիկական և և արտադրական բոլոր ցուցանիշներն ու հետևել արտադրողի բոլոր հրահանգներին ու ցուցումներին: Մաքրման կայանին անհրաժեշտ է նաև էլեկտրական հոսանքի մատակարարում: Խողովակների կցվող միացություններում հարկավոր է օգտագործել սեղմող օղակներ: Կոյուղու համակարգի մոնտաժումն ու փորձարկումը իրականացվում է համապատասխան աշխատանքի արտադրության գործող նորմերին ու կանոններին ` ՇՆՈՒԿ 3.05.01 - 85: Շինարարական, փորման աշխատանքներն սկսելուց առաջ անհրաժեշտ է ստանալ բոլոր այն կազմակերպությունների թույլտվությունները ում իրավասության տակ են գտնվում ստորգետնյա կոմունիկցիաները:

| Պաշտոն | Անուն,ազգանուն | Ստորագր. | | Ալավերդի համայնքի Արևածագ,Կարմիր Աղեկ,Հագվի,Նեղուց բնակավայրերի խմելու ջրի և ջրահեռացման ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման և երաշխավորագրի տրամադրման աշխատանքներ<br>Պատվիրատու ` Ալավերդու համայնքապետարան | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| ՆԳճ | Ն.Սարդարյան | | | ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ | Փուլ | Թերթ | Թերթեր |
| ԳԾԵՑ | Ն.Սարդարյան | | | ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ | ԱՆ | 1 | 12 |
| ՆԽ | Հ.Դավթյան | | | | | | |
| | | | | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ | SARDARYANSHIN | | |